ՕՖԵԼՅԱ ՔՈՉԱՐՅԱՆ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՈՉ ՄԻ ՓՈԽԶԻՋՈՒՄ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑՈՒՄ

Երեւանցիների համար սա է հիմնախնդրի հայանպաստ լուծումը, թեպետ շատերը կարծում են, որ «այս իշխանություններն ավելի շուտ Ղարաբաղը կտան, քան իրենց աթոռը»

Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հնարավոր տեղաշարժի ակնկալիքներն, ինչպես հայտնի է, կապվում էին Ադրբեջանի նախագահի ընտրությունների հետ: Այլեւս անցած շրջափուլ է նաեւ քաղաքական այդ իրարանցումը, մնում է սպասել խնդրի կարգավորման նոր զարգացումներին: Թե ինչպե՞ս կգործեն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, հակամարտող կողմերի ղեկավարները՝ առաջիկայում պարզ կլինի: Սակայն հիմնախնդիրը չի կարող կարգավորվել առանց հանրային կարծիքը հաշվի առնելու: Հասարակական տրամադրություններին փոքր-ինչ ծանոթանալու համար Երեւանի փողոցներում 30 պատահական անցորդների դիմեցինք հետեւյալ հարցերով.

1. Ըստ Ձեզ՝ Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման շուրջ համանախագահողները մինչեւ տարեվերջ որեւէ լուծման կհանգե՞ն, թե՞ ոչ:

2. Ինչպիսի՞ն պետք է լինի կարգավորման արդյունքը, որպեսզի այն համարվի հայանպաստ:

3. Ոչ լեգիտիմ նախագահը իրավունք ո՞ւնի ստորագրել ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման փաստաթղթերի տակ:

4. Հնարավո՞ր է, որ Ղարաբաղի կարգավորման խնդիրը Հայաստանում դարձյալ իշխանափոխության հանգեցնի:

Տեղեկացնենք, որ հարցումները անցկացվել են տարիքային տարբեր խմբերի (20-70 տարեկան) միջեւ: Հարցված գրեթե բոլոր քաղաքացիները համոզված են, որ ոչ միայն մինչեւ տարեվերջ, այլ, ընդհանրապես, համանախագահողները երբեւիցե վերջնական որոշում չեն ընդունի, քանի որ «հնարավոր չէ անգամ պատկերացնել, որ գերտերությունների շահերն այս դեպքում համընկնեն»: Մեր համաքաղաքացիները կարծում են, որ մանավանդ Ադրբեջանի ընտրություններից հետո գործընթացը բավականին կծգձվի, մինչեւ Ադրբեջանի նախագահը կհասցնի ծանոթանալ եւ պատկերացում կազմել կարգավորման մասին: «Կարծում եմ, որ մինչեւ տարեվերջ ղարաբաղյան հիմնախնդիրը չի կարգավորվի, քանի որ խանգարող հանգամանքները շատ են: Համանախագահների ցանկանալը շատ քիչ է, եւ չպետք է մոռանալ Արցախի, Հայաստանի եւ Ադրբեջանի իշխանությունների գործոնը» (Քրիստինե Գասպարյան, 22 տ., Անանիա Շիրակացի համալսարանի ուսանող, իրավաբան): Իսկ մեկ քաղաքացի էլ չշրջանցեց նաեւ կարգավորման հարցում արտաքին ճնշման գործոնը, ինչն, ըստ նրա, ավելի հավանական է եւ հարցը լուծելիս կարեւոր նշանակություն կունենա: Հարցվածներից 10-ը թերահավատությամբ են վերաբերում կարգավորմանը, եւ չեն կարող կողմնորոշվել, քանի որ հստակ տեղեկատվության չունեն, միեւնույն ժամանակ, ըստ նրանց, կասկածելի է, որ գերտերությունները համաձայնության կգան:

Մեր 2-րդ «Ինչպիսի՞ն պետք է լինի կարգավորման արդյունքը, որպեսզի այն հայանպաստ համարվի» հարցին գրեթե միանշանակ հնչում էր մեկ պատասխան ազատագրված հողերը չպետք է վերադարձվեն: Մեր համաքաղաքացիները աներկբա պնդում էին, որ «հայանպաստ միակ լուծումը տարածքների պահպանումն է առանց որեւէ փոխզիջման, դրանից չզատելով նաեւ Արցախի կարգավիճակի հարցը»: «Ի՞նչ փոխզիջման մասին է խոսքը, երբ մեր տղաները այդ հողերը արյունով են գրավել, այլ ոչ թե նվեր ենք ստացել» (Լեւոն Օհանյան, 70 տ., սեպագործ): Կամ «Գաղտնի խոսում են, թե տարածքները հանձնելու ենք: Ոչ Քոչարյանը, ոչ Ալիեւը թող հույսեր չփայփայեն, ոչինչ էլ չենք զիջելու» (Դավիթ Ասլանյան, Տնտեսագիտական համալսարանի 3-րդ կուրսի ուսանող):

Իսկ «Ոչ լեգիտիմ իշխանությունը իրավունք ունի՞ ստորագրել հիմնախնդրի կարգավորման փաստաթղթերի տակ» հարցին ի պատասխան 30 քաղաքացիներից 28-ը նշում էին, որ «լեգիտիմ է, թե ոչ նախագահը կամ իշխանությունը չեն Ղարաբաղի հարցը լուծողը», դրանով հանդերձ հավաստիացնելով, որ նախագահը կարող է ոչ լեգիտիմ լինել, սակայն այս հարցում մեր շահերից բխող փաստաթուղթ ստորագրել: «Քոչարյանի սխալներն առանց այն էլ շատ են, բացի այդ էլ, նա ինքնագլուխ չի ստորագրի»: (Դավիթ Ասլանյան):

Մի քաղաքացի էլ հավատացած էր, որ «Ղարաբաղի համար կռված մարդը, ում եղբայրը մահացել է իր ձեռքերի վրա (Քոչարյանի մասին է խոսքը - Օ.Ք.) մեզ վնասող փաստաթղթի տակ չի ստորագրի»: Եղավ նաեւ այսպիսի պատասխան. «Հարցին դժվարանում եմ պատասխանել, սակայն կարծում եմ, որ Ադրբեջանի ոչ լեգիտիմ նախագահը իրավունք չունի ստորագրելու» (Աշոտ Ավետյան, 43 տ., զինվորական): Հարցմանը մասնակցող մի քաղաքացի էլ հաստատապես համոզված էր, որ «Լեգիտիմ, թե ոչ, իշխանությունները չեն որոշելու Ղարաբաղի հարցը: Գերտերություններն ասելու են, մենք էլ անելու ենք» (Նորիկ Պետրոսյան, 26 տ., գործազուրկ):

Ինչ վերաբերում է 4-րդ «Հնարավո՞ր է, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորման խնդիրը Հայաստանում դարձյալ իշխանափոխության հանգեցնի» հարցին տրվեցին իրարամերժ մեկնաբանություններ: Պատասխանների մեծ հատկապես տարբերվում էին երիտասարդ սերնդի ներկայացուցիչներինը: Մի խումբը կարծում էր, որ, այնուամենայնիվ, դժվար թե մեր երկրում այդ պատճառով իշխանափոխություն լինի, մյուս խումբն էլ հավատացած էր, որ չի բացառվում եւ մեծ է դրա հնարավորությունը: «Հնարավոր է, եթե ժողովուրդը հասկանա, որ այս հարցում ինչ-որ մի բան այնպես չի ընթանում: Այդ ժամանակ նա անպայման ոտքի կկանգնի, մանավանդ որ դրա վտանգը կա» (Ռադիկ Մարտիրոսյան, 60 տ., տնտեսագետ): Կային նաեւ պատասխաններ, ըստ որոնց, «այս իշխանություններն ավելի շուտ Ղարաբաղը կտան, քան իրենց աթոռը»: 30 քաղաքացիներից 14-ը կարծում է, որ կարգավորումը չի կարող հանգեցնել իշխանափոխության, 16-ը՝ ընդհակառակը, գտնում է, որ կհանգեցնի:

Հարցումներն ակնհայտ դարձրեցին, որ հասարակության անդամները անտարբեր չեն հիմնախնդրի կարգավորման նկատմամբ եւ հարցի ամենաչնչին ոչ հայանպաստ լուծման կասկածների դեպքում անգամ հասարակությունը կընդվզի իշխանությունների դեմ: «Իշխանափոխության համար լուրջ բան խումներ են հարկավոր, իսկ Ղարաբաղի հարցում ուզում եմ հավատալ, որ իշխանությունն ու ժողովուրդը տարաձայնություններ չեն ունենա, այլապես դրանից ոչ թե իշխանափոխություն, այլ պատերազմի հոտ է փչում» (Քրիստինե Գասպարյան):